ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__2058-Ա___ « 26 » մայիսի 2025թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 27.03.2025 թվականին հայտարարված «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-25/19» ծածկագրով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի h.87 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) գնահատող հանձնաժողովի 08.04.2025 թվականի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընկերությանը, օրենքով սահմանված կարգով և ժամկետում առաջարկվել է ներկայացնել իր կողմից վավերացված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի ապահովումները: Ընկերությանը 30.04.2025 թվականին տրամադրվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերության կողմից թողարկված թիվ 25592139668 և թիվ 25592139671 բանկային երաշխիքները, սակայն նշված երաշխիքների 5-րդ կետով սահմանված երաշխիքների գործողության ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերությունը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարությունը 15.05.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ